

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2017թ 1-ին կիսամյակում

«Մտնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Շուկայի վերահսկողության տեսչական մարմին ստացված դիմում-բողոքների վերաբերյալ

Նշված ժամանակահատվածում՝

1. Տեսչական մարմնի «Թեժ գիծ» հեռախոսահամարով ստացվել է թվով 113 հեռախոսազանգ, որոնցից՝

- թվով 26 հեռախոսազանգ վերաբերել է ոչ պարենային ապրանքների տեխնիկական կանոնակարգերի դրույթների պարզաբանմանը՝ մակնշմանը, համապատասխանության գնահատման ընթացակարգերին, անվտանգության ցուցանիշներին:

-թվով 80 հեռախոսազանգ Տեսչական մարմնին վերապահված լիազորությունների շրջանակներից դուրս է եղել, որոնցից 19-ը վերաբերել է պարենային ապրանքներին, բջջային կապի սակագներին, ապրանքների գներին և այլն, իսկ 61-ը՝ գնված ոչ պարենային ապրանքների հետ վերադարձնելուն կամ փոխանակմանը:

Տրվել են պարզաբանումներ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին», «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 30-ի թիվ 77 որոշման և ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1063-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կանոնադրության վերաբերյալ:

-թվով 7 հեռախոսազանգերում քաղաքացիներից ներկայացվել են բողոքներ անորակ ոչ պարենային ապրանքների վաճառքի վերաբերյալ: Տրվել են պարզաբանումներ և փաստերն ընդունվել են ի գիտություն՝ ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված աշխատանքների ընթացքում դրանց անդրադառնալու նպատակով:

Տեսչական մարմին ստացվել է 5 գրավոր դիմում, կապված սպառողների շահերի պաշտպանության հարցերի հետ՝ 3-ը քաղաքացիներից /գնված բջջային հեռախոսի և նոթբուկի հետ վերադարձ, մարտկոցների մակնշման բովանդակության պարզաբանում/, 2-ը լրագրողներից /խաղալիքների անվտանգություն և ԱԳԼԾ-ներում իրացվող գազի որակ/: Բոլորին տրվել է ն սպառիչ պատասխաններ: